ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

մայիսի 2021 թվականի №Ա
քաղ. Երևան

ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ 16-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ 2-ՐԴ ՇՂԹԱՅԻ ԱՅԳՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՋՐԱՎԱԶԱՆԻ ՍՆՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Դիմող անձ) 2021 թվականի մարտի 19-ի №16/6108 գրությունը, որով վերջինս դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն)՝ Աջափնյակ վարչական շրջանի 16-րդ թաղամասի 2-րդ շղթայի այգում կառուցված ջրավազանի սնուցման նպատակով տեղադրված պոմպակայանի սպառման համակարգն (այսուհետ՝ Սպառման համակարգ) էլեկտրական ցանցին միացնելու նպատակով տեխնիկական պայմաններ տրամադրելու խնդրանքով,

բ) որ Սպառման համակարգն Ընկերության էլեկտրական ցանցին միացվում է Դիմող անձի դիմումի համաձայն՝ որպես առանձին սպառման համակարգ, և որպես բաժանորդ հանդես է գալիս Աջափնյակ վարչական շրջանը,

գ) Դիմող անձի 2021 թվականի ապրիլի 21-ի №16/8970 գրությունը, որի համաձայն՝ վերոնշյալ պոմպակայանի կառուցման համար նախատեսված տարածքը հանդիսանում է համայնքային սեփականություն,

դ) Ընկերության 2021 թվականի մայիսի 4-ի №Ե-169-21 և Դիմող անձի 2021 թվականի մայիսի 10-ի գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն առարկում Սպառման համակարգն էլեկտրական ցանցին սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով միացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ

հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվում է Կանոնների 14.4 կետով սահմանված կարգով տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ առանց Կանոնների 13.2 կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթուղթը ներկայացնելու:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
մայիսի 2021թ.